

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վիկտոր Դալլաքյանի և Վարդան Բոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման վերաբերյալ առաջարկությունը համահունչ է հանրային ծառայողների վարձատրության քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած մոտեցումներին: Սակայն հարկ ենք համարում նշել, որ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը հարկային և մաքսային ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափերի միջինի կրկնապատիկին հավասարեցնելու պարագայում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում կառաջանա

շուրջ 25.0 մլրդ դրամի լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն, որը նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի նախագծով:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների սղությունը և այն հանգամանքը, որ տնտեսությունում ոչ բնական՝ դժվար կանխատեսվող զարգացումների ծավալման պայմաններում հնարավոր չէ հստակ պատկերացնել առաջիկա տարիների զարգացումների արդյունքները, նախագծի ֆինանսական ապահովումը ներկայումս իրատեսական չենք համարում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի՝ նախագիծը պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3 հոլիսի 2002 թվականի, ՀՕ-409 7-րդ հոդվածի երրորդ մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Քաղաքացիական ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հարկային եւ մաքսային ծառայողների բազային պաշտոնային դրույքաչափերի միջինի կրկնապատիկը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունումը նպատակ ունի հնարավորինս միասնականացնել Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության համակարգը կարգավորող օրենսդրական մոտեցումները:

Հայաստանի Հանրապետության պետական ծառայության համակարգը կարգավորող գործող օրենսդրական դաշտը տարբերակված մոտեցում ունի ծառայության տարբեր տեսակների նկատմամբ: Օրենքի ընդունումը մեկ քայլ կլինի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայողների սոցիալական երաշխիքները, կոնկրետ այս պարագայում վարձատրությունը, ներդաշնակեցնել պետական ծառայության մյուս տեսակների ծառայողների

(հարկային, մաքսային, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի քաղաքացիական ծառայողների) վարձատրության հետ:

Օրենքի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև պետական ծառայության մյուս տեսակ հանդիսացող Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վարձատրությունը որոշ չափով համահունչ կդառնա պետական ծառայության մյուս տեսակների ծառայողների վարձատրությանը: